ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-19/24-177-19

Ք. Երևան «16» մայիսի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և *«ՊԵՅՅՈ» ՍՊԸ*-ն, ի դեմս ընկերության տնօրեն տիկին *Սվետլանա Սարգսյանի*, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հանրապետական ուսանողական մարզական խաղեր» միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3394000 (երեք միլիոն երեք հարյուր ինըսունչորս հազար) ՀՀ դրամ:

4.1.1. Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.2. Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ՝ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	*«ՊԵՅՅՈ» ՍՊԸ*
ք. Երևան, Աբովյան 9	ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011010932	Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 02586282	ՀՎՀՀ՝ 06955741
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Կ. Էլոյան	Ա. Մարգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«16» մայիսի 2019 թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-19/24- ծածկագրով պայմանագրի
172-19

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	92621110/5	*	դրամ	3394000	1	**ք. Երևան**	**16.10.2019թ-03.12.2019 թ.**

Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում

Հանրապետական ուսանողական մարզական խաղերը (այսուհետ՝ Մարզական խաղեր) կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերում՝

Մարզական խաղերի նպատակն է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում:

Մարզական խաղերի ծառայությունը մատուցվում է մեկ փուլով՝ հանրապետական:

Մարզական խաղերի հանրապետական փուլը կազմակերպվելու և անցկացվելու է 2019 թվականի հոկտեմբերի 16-ից դեկտեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքում:

Մարզական խաղերին կմասնակցեն բարձրագույն ուսումնական հաստատությունների հավաքական թիմերի ուսանողները:

Հանրապետական մարզական խաղերը անցկացվելու է 7 մարզաձևերից՝ բասկետբոլ (տղաներ, աղջիկներ), վոլեյբոլ (տղաներ, աղջիկներ), ֆուտզալ (տղաներ), հնգամարտ (տղաներ, աղջիկներ), սեղանի թենիս (տղաներ, աղջիկներ), ուժային եռամարտ (տղաներ, աղջիկներ), հրաձգություն (տղաներ, աղջիկներ):

-Հնգամարտ - 16-18.10.2019 թ. (ներառյալ),
-Ուժային եռամարտ - 06-08.11.2019 թ. (ներառյալ),
-Ֆուտզալ - 19-24.11.2019 թ. (ներառյալ),
-Հրաձգություն - 21-23.11.2019 թ. (ներառյալ),
-Վոլեյբոլ - 24-29.11.2019 թ. (ներառյալ),
-Բասկետբոլ - 26.11-01.12.2019 թ. (ներառյալ),
-Սեղանի թենիս - 01-03.12.2019 թ. (ներառյալ):

Հանրապետական փուլում մասնակիցը պարտավոր է ապահովել ըստ յուրաքանչյուր մարզաձևի երկու մարզադահլիճ՝ բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտզալ մարզաձևերի համար և մեկ մարզադահլիճ՝ սեղանի թենիս, բազկամարտ մարզաձևերի համար: Մարզադաշտ և ատլետիկական մարզադահլիճ (մանեժ) հնգամարտ մարզաձևի համար (400 մետր վազքուղյակներով, ցատկափոսով, պտտաձողով, մարզադաշտը հնձված, վազքուղիները գծված, որտեղ անցկացվելու է՝ վազք 100 մետր, վազք 1000 մետր, թենիսի գնդակի նետում, տեղից հեռացատկ և հենում կախված դրությունից ձգումներ մրցումները): Հրաձգարանը 10 մետր երկարությամբ (հրաձգության համար), 10 օդամղիչ հրացաններով, փամփուշտներով և օդամղիչ հրացանների հրաձգության թիրախներով:

Մասնակիցը պարտավոր է մարզադաշտը և մարզադահլիճներ (բոլոր մարզաձևերի համար) իրենց հարակից տարածքներով ձևավորել ՀՀ դրոշներով և մրցման խորհրդանիշ պաստառներով տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

Մարզական խաղերում մրցանակակիր մասնակիցներին, թիմերին պարգևատրելու համար անհրաժեշտ են հետևյալ մրցանակները՝

Վկայագիր (հավաստագիր) – 216 հատ
Վկայագիր (շնորհակալագիր) – 10 հատ
Վկայագիրի համար գրպանիկով թղթապանակ - 13 հատ
Մեդալներ – 213 հատ
Հուշանվեր (գավաթներ N1) 9 x 3=27 հատ
Հուշանվեր (գավաթներ N2) 3 հատ
Հուշանվեր (օրգանական ապակուց) 12 x 3 = 36 հատ

Վկայագիր (Հավաստագիր). Հանրապետական փուլի մրցումներին 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին և մարզիկներին պարգևատրելու համար: Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ. Հանրապետական փուլից 10 օր առաջ, հավաստագրի ձևը կցվում է հայտին:

Վկայագիր (շնորհակալագիր) չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ,

Վկայագիրի գրպանիկով թղթապանակ, գինանշանով (Շնորհակալագիրի և հավաստագրի): Չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

Մեդալներ՝ չափսը՝ 5-6 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից.

Մասնակիցը մեդալի տեսքը պարտավոր է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ. հանրապետական փուլից 10 օր առաջ:

Հուշանվեր N1՝ (Գավաթ) (բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտզալ, հրաձգություն և հնգամարտ մարզաձևերի համար) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակության համար)՝ 50 սմ, 45 սմ և 40 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

Հուշանվեր N2 (Գավաթներ) ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված ԲՈՒՀ-երին պարգևատրելու համար.
1-ին տեղ՝ 65 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով. 2-րդ տեղ՝ 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.
3-րդ տեղ՝ 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

Յուրաքանչյուր գավաթի պատվանդանի վրա տեսքը և տեքստը պետք է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ, հանրապետական փուլից 10 օր առաջ:

Հուշանվեր օրգանական ապակուց պատրաստված, տարբեր չափերի: Չափսը՝ 1-ին տեղը՝ 10 սմ լայնությունը և 20 սմ բարձրությամբ, 1 սմ հաստությամբ, 2-րդ տեղը՝ 10 սմ լայնությունը և 18 սմ բարձրությամբ, 1 սմ հաստությամբ, 3-րդ տեղը՝ 10 սմ լայնությունը և 17 սմ բարձրությամբ, 1 սմ հաստությամբ: Տեսքը և տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ: Սեղանի թենիս և ուժային եռամարտ մարզաձևերի մրցանակակիրների պարգևատրման համար:

Մարզական խաղերի մրցումների
անցկացման համար անհրաժեշտ է հետևյալ մարզագույքը՝

Գնդակ բասկետբոլի -15 հատ
Գնդակ վոլեյբոլի -12 հատ
Ֆուտզալի գնդակ - 10 հատ
Սեղանի թենիսի գնդակ - 100 հատ
Սեղանի թենիսի ձեռնաթի - 8 լրակազմ
Սեղանի թենիսի ցանց - 2 հատ
Վարկյանաչափ - 2 հատ
Թենիսի գնդակ - 20 հատ
Ռուլետկա (100 մ.երկարությամբ) - 1 հատ
Հրաձգության փամփուշտ - 2000 հատ
Հրաձգության թղթե թիրախներ - 250 հատ

Բասկետբոլի գնդակ՝ կաշվե հումքից, N 5 կամ N 6, չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար.

Վոլեյբոլի գնդակ՝ կաշվե կամ փոխարինող հումքից. N 5, 6 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ.

Ֆուտզալի գնդակ՝ կաշվե հումքից. N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից

(պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով).

Օդամղիչ հրացանի փամփուշտ (շեշմա).

Սեղանի թենիսի գնդակ՝ պատրաստված պլաստմասսայից, չափերը՝ 40 մմ տրամագծով, նարնջագույն.

Սեղանի թենիսի ձեռնաթի (լրակազմ) (ռակետ)՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ.

Սեղանի թենիսի ցանց՝ երկարությունը 183 սմ, լայնությունը 15,25 սմ, ցանցի միջով ձգված տրոս, ամրակներ սեղանի թենիսի սեղանին ամրացման համար, ցանցը լինում է տարբեր գույների, սինթետիկ թելից պատրաստված.

Վարկյանաչափ՝ էլեկտրոնային, պլաստմասսե պատյանով.

Թենիսի գնդակ (Babolan կամ համարժեքը)՝ դեղին գույնի.

Ռուլետկա (100-մ).

Հրաձգության թղթե թիրախներ N10.

Մարզական խաղերի անցկացման համար նախատեսված է հետևյալ ծառայությունները՝ (մարզակառույցի տրամադրում և այլ ծառայություններ)

1. **Բասկետբոլ՝**

Մարզադահլիճների տրամադրում (2 դահլիճ) Երևանի մարզաբազաներ (Պետական համալսարանի մարզաբազա, «Դինամո», «Միկա», «Գրանդ Սպորտ» կամ այլ նմանատիպ մարզաբազա) **5 օր**

2. **Վոլեյբոլ՝**

Մարզադահլիճների տրամադրում (2 դահլիճ) Երևանի մարզաբազաներ (Պետական համալսարանի մարզաբազա, «Դինամո», «Միկա», «Գրանդ Սպորտ» կամ այլ նմանատիպ մարզաբազա). **5 օր**

3. **Ֆուտզալ՝**

Մարզադահլիճների տրամադրում (2 դահլիճ) Երևանի մարզաբազաներ (Պետական համալսարանի մարզաբազա,, «Դինամո» կամ «Միկա», «Գրանդ Սպորտ» կամ այլ նմանատիպ մարզաբազա). **5 օր**

4. **Հնգամարտ՝**

Մարզադաշտի և մարզադահլիճի (մանեժ) տրամադրում Երևանում («Սպարտակ» կամ այլ նմանատիպ աթլետիկական մարզադաշտ). **2 օր**

5. **Սեղանի թենիս՝**

Մարզադահլիճի տրամադրում Երևանում (կահավորված համապատասխան մարզագույքով). **2 օր**

6. **Ուժային եռամարտ՝**

Մարզադահլիճի տրամադրում Երևանի քաղաքում, մարզաբազաները պետք է կահավորված լինեն համապատասխան սարքավորումներով՝ համապատասխան մարզասարքերով). **2 օր**

7. **Հրաձգություն**

Հրաձգարանի տրամադրում Երևան քաղաքում, համապատասխան հրաձգարան. **2 օր**

Մարզական խաղերը կազմակերպելու և անցկացնելու համար մասնակիցը պարտավոր է ապահովել մարզադահլիճը ձևավորված մրցաշարի անվանմամբ, համապատասխան մարզագույքով, հաղորդավարի ծառայությամբ, ռադիո տեխնիկա-բարձրախոսներով, խաղերի ժամանակ մրցումների ընթացքը կազմակերպելու, ինչպես նաև մրցումների ամբողջ ընթացքում Ֆոտո լուսանկարահանում և նկարների տպագրում տարբեր մարզաձևերից, պատվոպատվանդան անհատական մարզաձևերի մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար, համաձայն ՄՍՖԴՔ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցի:

Ռադիոհանգույցի վարձակալում՝

բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ.

Հաղորդավարի ծառայություն.

Միջոցառման ավարտին ճայթռուկ (հրավառություն՝ **6** կետից), մարզադահլիճում, ուսանողական խաղերի փակման վերջին օրը.

Ֆոտո նկարահանում.

Տրանսպորտային միջոց՝ Երևան քաղաքում նախատեսնված մարզագույքը մրցավայր տեղափոխելու համար:

(Համաձայն ժամանակացույցի)

Մարզական խաղերի մրցավարական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ գրենական պարագաները.

Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար. **20 հատ**

Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու

հնարավորությամբ). **100 հատ**

Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ. **2 հատ**

Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 210 x 297 մմ. **2 հատ**

Ժապավեն, պոլիեթիլային ժապավեն (գունավոր) 40 մմ x 35 մ չափսի. **6 հատ**

Հաշվիչ (կալկուլյատոր) «CITIZEN» կամ համարժեքը. **1 հատ**

Գելային գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել). **2 հատ**

Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի. **10 հատ**

Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ. **10 հատ**

Կավիճ, աղացած պոլիէթիլային փաթեթով, սպիտակ գույնի. **1 տուփ**

Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 22-ը հունվարի 2019 թ. N 12-Ա/1 հրամանով հաստատված Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացման կանոնակարգի պահանջների համաձայն:

*** Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր, համաձայն ժամանակացույցի, պարգևատրման ցանկի համապատասխան կազմում է նվերների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում կազմում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:***

**** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը և համաձայն ժամանակացույցի ծառայությունների կատարումը:***

*****Հավաստագրի օրինակելի ձևը կցվում է***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011010932	Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ 02586282	ՀՎՀՀ՝ 06955741
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Վ. Էլոյան	Ս. Բարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«26» մայիսի 2019 թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-19/24 ծածկագրով պայմանագրի
177-19

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/5	«Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում» մրցույթի անցկացում	0	0	0	0	0	0	0	3394.0	3394.0	3394.0	3394.0	3394.0	3394.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010932
ՀՎՀՀ 02586282
Գլխավոր քարտուղար՝
Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԵՅՑՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 06955741
Տնօրեն՝
Ս. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«16» մայիսի 2019 թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-19/24 ծածկագրով պայմանագրի
177-19

Պայմանագրի կողմ
«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 06955741

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010932
ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Հավելված 3.1
« » մայիսի 2019 թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-19/24 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն